ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի №405Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, և հաշվի առնելով «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 20-ի և ի լրումն ներկայացված 2024 թվականի հունվարի 10-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №405Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2024 թվականի մարտի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2024 թվականի հունվարի 18-ը» բառերով, «մինչև 2039 թվականի մարտի 1-ը»

բառերը՝ «մինչև 2039 թվականի հունվարի 18-ը» բառերով, իսկ «Գորայք» բառը՝ «Սիսիան» բառով,

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 5519 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով).

1) հիդրոտուրբին №1՝ G 150.029/30 gII L, 4853 կՎտ, 2020թ.,
2) գեներատոր №1՝ SEH 710 LL6, 4661 կՎտ, 2020թ.,
3) հիդրոտուրբին №2՝ G5.018/11g L, 860 կՎտ, 2022թ.,
4) գեներատոր №2՝ MJT 500 SC6 B3, անվանական հզորությունը՝ 817 կՎտ, թույլատրելի աշխատանքային հզորությունը՝ 858 կՎտ, 2022թ.:»:

3. «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2021 թվականի դեկտեմբերի 14-ի №E/21-06100-1973 գրությամբ ներկայացված №E2100065 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

4. «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝ պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 18-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունվարի 2024թ.